

ՀԱՆԳԻՍՏ ՎԱՅԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ



Անժամանակ՝ 68-րդ տարում կյանքից հեռացավ ծանաչված բանաստեղծ, Գևորգյան Հոգևոր ճեմարանի սիրված դասախոս, Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հիմնադիր աշխատակիցներից Վաչագան Հովեյի Հովհաննիսյանը: Վաչագանի ծնողները սասունցիներ էին, որոնք Սեծ եղեռնից հրաշքով փրկվելով՝ ապաստանել էին Թաթևի շրջանի Ներքին Բազմաբերդ գյուղում: 1931 թ. օգոստոսի 23-ին այս գյուղում է ծնվել ապագա բանաստեղծն ու մանկավարժը: Միջնակարգն ավարտելուց հետո, Վաչագանն ընտանիքով տեղափոխվում է Էջմիածին: Ընդունվում է

Գևորգյան Հոգևոր ճեմարան, որն ավարտում է 1954 թ. և աշխատանքի է անցնում Մայրավանքում, այնուհետև որպես գրաշար՝ Երևանի պոլիգրաֆ կոմբինատում: Աշխատանքին զուգահեռ նա ուսանում է Երևանի մանկավարժական ինստիտուտի բանասիրության ֆակուլտետի հեռակա բաժնում:

Նրա առաջին բանաստեղծությունները տպագրվում են Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրում՝ արժանանալով Վարպետի՝ Ավետիք Իսահակյանի ուշադրությանը, հատկապես «Մեր վանքերը» վերտառությամբ ստեղծագործությունը: Ծանոթանալով պատանի բանաստեղծի հետ, Վարպետն ասել է. «Գառնուկս, տասը այսպիսի բանաստեղծություն էլ որ գրես, հայ ժողովուրդը քեզ երկար կհիշի»: Պեռ ուսանող էր նա, երբ տպագրվեցին «Վաղվա համար» և «Սրտի զարկեր» բանաստեղծական ժողովածուները:

1967 թ. լուսահոգի Վարդգես Պետրոսյանի և մի շարք այլ մտավորականների հետ մասնակցեց «Գարուն» երիտասարդական ամսագրի հիմնմանը, որի տեխնիկական խմբագիրն էր երկար տարիներ: 1972, 1975 թթ. հաջորդաբար լույս են տեսնում «Աշխարհն իմ մեջ» և «Հողի կանչը» գրքերը: Ընթերցողների կողմից նրա յուրաքանչյուր ժողովածուն ընդունվում էր քերմորեն: Երգրի անպարփակ ու այրող կարոտը, ապուլապների չիրականացած մխացող երազը, Սասուն աշխարհի չխամրող պատկերները շնչավորվում էին նրա գրչի տակ: Եվ նա լիաբուռն սիրով բանաստեղծության թովչանքը բաշխում էր անմնացորդ, ընծայում Աստուծո տվածը: Նրա խառնվածքին հոգեհարազատ էին մեր ժողովրդի հերոսական անցյալն ու եղեռնի չսպիացած վերքերը, նրա բողոքն ու արդարացի ընդվզումը, լքված վանքերի քարե մորմոքն ու հայ մարդու տառապանքից ծնված մի բուռն հրճվանքը:

Գրքից գիրք նրա ստեղծագործությունների շրջանակները դարձան ավելի ընդգրկուն, շաղախվեցին հայրենասիրական տաք թրթիռներով: Հայրենի հող ու ջրին, Ավարայրին, մեր վանքերին ու հավատին նվիրված նրա ծոներգերն ընթերցողի հոգում մաղում են լույս ու հավատ, լցնում հոգևոր մաքրությամբ:

80-ական թվականներին տպագրվում են «Հին տան առավուտը», իսկ Մոսկվայում ռուսերեն «Հավատի գույնը» չափածո գրքերը: «Խորան Սիրո և Հավատի» ժողովածուն /1993 թ./ եղավ բանաստեղծի կարապի երգը: Վաչագան Հովհաննիսյանը ոչ միայն զբաղվեց գրական-ստեղծագործական, խմբագրական-հրատարակչական բեղուն աշխատանքով, այլև իր ամբողջ կյանքում բարձր պատասխանատվությամբ նվիրվեց մանկավարժական աշխատանքին: Հայոց լեզու և գրականություն դասավանդեց Գևորգյան Հոգևոր ճեմարանում և էջմիածին քաղաքի մի շարք միջնակարգ դպրոցներում:

Հայոց լեզվի հմայքն ու հավերժությունը նա ուսուցանում էր յուրովի, բանաստեղծորեն, նվիրյալի պատրաստակամությամբ: Բարի էր, միաժամանակ՝ անաչառ: Օգտակար խորհուրդներ էր տալիս ստեղծագործական առաքին փորձերը կատարող պատանիներին: Աշխարհի չափ ուրախանում էր մի լավ քառատողով, հաջողված ստեղծագործությունով: Երկար տարիներ ղեկավարում էր էջմիածնի գրական միավորումը: Վաչագան Հովհաննիսյանի ստեղծագործությունները տպագրվում էին նաև Սփյուռքի մամուլում: Արտերկրում նա նույնպես սիրված ու զնահատված հեղինակ էր, Վաչագանը Հայ դատի ուխտի երդվյալ անդամներից էր, «Ուխտատուն» թանգարան-ինստիտուտի ամենաեռանդուն անդամ-հիմնադիրներից: Իր և սասունցի մի խումբ նվիրյալների ջանադիր հետևողականությամբ ստեղծվեց այդ բացառիկ թանգարանը: Բարձր ու առաքինի էին նրա մարդկային հատկանիշները: Շնամրիտ խոսքն ու ազնվությունը, հայրենասիրությունն ու քաջությունը նրա պաշտամունքն էին: Ստեղծագործական, մանկավարժական իր ողջ-կյանքում մնաց պարզ ու հասարակ, իր ժողովրդի իրձերն ու զգացմունքներն արտահայտող բանաստեղծ: Ընկերություն արեց և՛ հայտնիների, և՛ շարքայինների հետ հավասարապես: Հայրենի գրական անդաստանում ունեցավ իր հաստատուն տեղը:

Ստեղծագործական բուռն կյանքով ապրող բանաստեղծն այլևս մեզ հետ չէ, մեզ հետ չէ Սասունի ու Մեղրագետի, Մարաթուկի, Արածանու, Էրզիր աշխարհի երգիչն ու երկրպագուն, շիտակ մարդն ու ազնվության ջատագովը: Քանի՜-քանի գրքեր, բանաստեղծական շարքեր մնացին անկատար: Ափսոս այն երազներին, որ չթևավորվեցին: Սակայն մնաց բանաստեղծի թրթռուն տողն ու խորիմաստ խորհուրդը: Հայրենի սուրբ մասունքների կարոտը, սիրո և հավատի, Ազգովի միասին լինելու և Մայրենին ամենից սուրբը համարելու պատգամը:

Եվ ես, և դու, և նա

Վաղը հող ենք մի բուռ,

Ծանփաղ ուղիղ գնա...

Խորդորում էր բանաստեղծը, և ինքն էլ իր ողջ կյանքում հավատարիմ մնաց իր ուխտին: Նրա հիշատակի լույսը, բանաստեղծական տողի քերթությունը կմնա նրա երգած կարոտի գույնի և Սասուն աշխարհի բնապատկերների մման:

Օրհնություն ու լույս, խնկաբուրմունք նրա հիշատակին: